ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՆՄԱՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համանման բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/118, 02.12.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Ֆոտոն» ՍՊԸ

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՔ-ՀՄԱԱՊՁԲ-20/6» հրատապ մեկ անձ

Գնման առարկան՝ «Արցախի Հանր. Երևան ժամանած ընտ. /անձանց/ պատերազմ մեկնած անձանց ընտ. և վիրավոր զինվորների ընտ. սոց. աջակցություն տրամադրելու նպատակով սննդամթերքի» ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝ Դադարեցնել կամ անվավեր ճանաչել «ԵՔ-ՀՄԱԱՊՁԲ-20/6» ծածկագրով հրատապ մեկ անձի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2020թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված 4.3-րդ կետով «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին
հասցե՝ք. Երևան, Կոմիտասի պողոտա, 54 բ շենք
Բողոքաբեր՝ <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ
հասցե՝Ք.Երևան, Ռոստոմի 58
տնօրեն՝ Նելլի Պետրոսյան, հեռ՝093-88-28-60, էլ. հասցե՝ms.foton2014@mail.ru
Պատվիրատու՝Երևանի քաղաքապետարան
հասցե՝ք. Երևան, Արգիշտիի 1
Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6 ծածկագրով հրատապ մեկ անձի միջոցով գնում կատարելու ընթացակարգ ԱՀ-ից Երևան ժամանած ընտանիքներին /անձանց/ պատերազմ մեկնած անձանց ընտանիքներին և վիրավոր զինվորների ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով սննդամթերքի ձեռբերում

ԲՈՂՈՔ

Հարգելի պարոն Օհանյան

Հայտնում եմ Ձեզ, որ ս.թ. նոյեմբերի 10-ին Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է ԱՀ-ից Երևան ժամանած ընտանիքներին /անձանց/ պատերազմ մեկնած անձանց ընտանիքներին և վիրավոր զինվորների ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով սննդամթերքի ձեռբերման ընթացակարգ:

Նշված ընթացակարգին մասնակցություն է ապահովել Ցիկլոիդ ՍՊԸ-ն, որը բողոք է ներկայացրել վերը նշված ընթացակարգի վերաբերյալ (հրապարակվել է gnumner.am կայքում 30.11.2020թ.) : Մրցույթի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը որոշում է կայացրել Ցիկլոիդ ՍՊԸ –ի հայտը մերժել, քանի որ գնային առաջարկը ենթակա չէ շտկման:

Քանի որ ՖՈՏՈՆ ՍՊԸ-ն ևս հայտ է ներկայացրել ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6 ծածկագրով հրատապ մեկ անձի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մի քանի չափաբաժինների մասով և մերժվել է գնահատող հանձնաժողովի կայացրած որոշման նույն հիմքով այնպես , ինչպես Ցիկլոիդ ՍՊԸ-ն, ՖՈՏՈՆ ՍՊԸ-ն ևս բողոքարկում է մրցույթի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումը և հայտնում է հետևյալը՝

Ըստ մրցույթի գնահատող հանձնաժողովի 13.11.2020 թվականի N2 արձանագրության համաձայն՝ մի քանի չափաբաժինների մասով ճանաչվել է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, ինչի համար հիմք է ընդունվել արձանագրության 3.1 կետով նշված աղյուսակը: Սակայն միևնույն արձանագրության համաձայն՝ նշվել է, որ ՖՈՏՈՆ ՍՊԸ -ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության /հավելված 1/ մեջ, գնային առաջարկում /հավելված 2/ և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում /հավելված 1.1/ առկա փաստաթղթերում «հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման» բառերի փոխարեն նշվել են «գնանշման հարցման բառերը»: Այս դեպքում նույնպես մրցույթի գնահատող հանձնաժողովը մերժել է ՖՈՏՈՆ ՍՊԸ-ի հայտ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

Գտնում ենք, որ ՖՈՏՈՆ ՍՊԸ -ի հայտը նման խախտման համար ենթակա չէր մերժման , քանի որ մրցույթի գնահատող հանձնաժողովը կարող էր ներկայացված Հավելված 1-ում, Հավելված 2-ում, Հավելված 1.1-ում նույնականացնել ընկերությանը, պատվիրատուին, գնման ընթացակարգի ծածկագիրը, ներկայացված գնման առարկաները՝ ըստ չափաբաժինների:

Գտնում ենք, որ Մրցույթի գնահատող հանձնաժողովը խախտել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ, 7-րդ հոդվածների պահանջները և թիվ 526-ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը՝ սխալ մերժելով մեր հայտը:

Գտնում ենք, որ այդ սխալը չէր կարող դիտարկվել որպես էական նշանակություն ունեցող խախտում, իսկ մերժելու արդյունքում մեր հայտը հաղթող են ճանաչվելու ավելի բարձր գին ներկայացրած մասնակիցներ:

Այդ իսկ կապակցությամբ խնդրում եմ Ձեզ բողոքը քննել և կայացնել որոշում՝ դադարեցնելով կամ անվավեր ճանաչելով ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6 ծածկագրով հրատապ մեկ անձի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2020 թվականի N2 արձանագրությամբ կայացված 4. 3-րդ կետով ՖՈՏՈՆ ՍՊԸ -ի հայտը մերժելու մասին որոշումը:

Կից Ձեզ եմ ներկայացնում՝

- բողոքարկման համար վճարված պետական տուրքի անդորրագրի պատճենը
- ՖՈՏՈՆ ՍՊԸ -ի տնօրենի անձնագրի և պետ. ռեգիստրի վկայականի պատճենները,
- ՖՈՏՈՆ ՍՊԸ -ի կողմից ներկայցված Հավելված 1-ը, Հավելված 2-ը և Հավելված 1.1-ը:

Առդիր՝ 14 թերթ:

ՖՈՏՈՆ ՍՊԸ, տնօրեն Նելլի Պետրոսյան

Ստորագրություն